ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

HAYKAZ ARAMYAN

IMPACT OF MONETARY POLICY ON THE SECURITIES MARKET IN RA

Key words: *securities market, stocks, corporate bonds, government bonds, monetary policy, monetary policy instruments*

A regression analysis was carried out to reveal the consequences of the monetary policy of the Central Bank of Armenia (CBA) on the securities market. Current article examines the instruments of monetary policy implemented by the CBA, assesses the impact of monetary policy indicators on various segments of the Armenian securities market, including equity market, corporate and government bond markets. Based on respective analysis, the relevant conclusions have been drawn.

ՀԱՅԿ ԲԵՋԱՆՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ՀՊՏՀ

ՏՈԿՈՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հիմնաբառեր. *տոկոսային քաղաքականություն, առևտրային բանկ, վարկային քաղաքականություն, ֆինանսական ռազմավարություն*

Տոկոսային քաղաքականության բովանդակության բացահայտման նպատակով անհրաժեշտ է սկզբում դիտարկել առևտրային բանկի տոկոսային քաղաքականության ընդհանուր գծերը, ապա առանձնացել դրան բնորոշ խնդիրներն ու նպատակները:

Հոդվածում ներկայացվում են տնտեսագիտական գրականության մեջ «տոկոսային քաղաքականություն» հասկացության էությանն ու բովանդակությանը, ինչպես նաև համապատասխան քաղաքականության ձևավորման սկզբունքներին ու տեսամեթոդական հիմքերին վերաբերող հարցեր:

Տոկոսային քաղաքականության բովանդակության բացահայտման նպատակով անհրաժեշտ է սկզբում դիտարկել ընդհանրապես առևտրային բանկի տոկոսային քաղաքականության ընդհանուր գծերը, իսկ հետագայում՝ առանձնացել վերջինիս բնորոշ խնդիրները և նպատակները:

«Քաղաքականություն» (հուն. politike՝ պետության կառավարման արվեստ) եզրույթը, սովորաբար, դիտարկվում է երկու մակարդակում՝ ամբողջ պետության (երկրի) և առանձին տնտեսական սուբյեկտի (մակրո- և միկրո-) մակարդակներում: Այսպես՝ Ս. Ի. Օժոգովի բառարանում տեղ են գտել հետևյալ սահմանումները.

1. «Քաղաքականությունը, որպես պետական իշխանության և պետական կառավարման մարմինների գործունեություն, արտացոլում է հասարակական և հասա-

ռակության տնտեսական կառուցվածքները:

2. Քաղաքականությունը ինչ-որ բանի ձեռքբերմանը կողմնորոշված գործողությունների դիտարկում է»[1]:

Տվյալ մեկնաբանությամբ քաղաքականությունը հասկացվում է մի կողմից՝ որպես գործնական գործունեություն, մյուս կողմից՝ որպես որոշակի նպատակների միտված գործողությունների ծրագիր (գործողությունների դիտարկում):

Արտերկրյա աղբյուրներում «քաղաքականություն» եզրույթը սահմանվում է հետևյալ կերպ. մի դեպքում՝ որպես «կուրսի հաստատում», որին հետևում են կառավարությունը, կազմակերպությունը, հաստատությունը կամ մասնավոր անձը, մյուս դեպքում՝ իբրև «գործերի կառավարման մեջ դատողությունների կշռադատություն» և «գործընթացների կառավարում»[2]: «Քաղաքականությունը հաջորդականորեն կապված գործողությունների կատարման եղանակ է, որտեղ սկզբունքները համապատասխան քաղաքականության սահմանման և իրականացման եղանակների հիմքն են»: Այստեղից հետևում է, որ քաղաքականություն ասելով անհրաժեշտ է հասկանալ ըստ որոշակի սկզբունքների իրականացվող գործնական գործողությունների ծրագիր:

«Տոկոս» և «քաղաքականություն» կատեգորիաների բովանդակության հետազոտությունների հիման վրա կատարված ընդհանրացումները և եզրակացությունները հնարավորություն են ընձեռում անցնելու առևտրային բանկի տոկոսային քաղաքականության բովանդակության անմիջական բացահայտմանը: Տնտեսագիտական գրականությունում բացակայում է տոկոսային քաղաքականության բովանդակության ամբողջական մեկնաբանությունը: Առավել հաճախ տոկոսային քաղաքականությունը սահմանվում է որպես վարկային քաղաքականության տարր, իսկ տոկոսադրույքների բոլոր տեսակներից վերլուծվում է վարկի տոկոսը. «Տոկոսային քաղաքականությունը վարկային քաղաքականության կարևոր հատված է» կամ «.... ակտիվ գործառնությունների տեսանկյունից, տոկոսային քաղաքականությունը վարկային քաղաքականության տարր է»[3]: Նման մոտեցումը վիճելի է, քանի որ տվյալ դեպքում տոկոսային քաղաքականությունը չի դիտարկվում որպես բանկային քաղաքականության ինքնուրույն տարր:

Որպես բանկային քաղաքականության առաձին տարր՝ տոկոսային քաղաքականության սահանման հիմնավորման համար ընդհանուր բանկային քաղաքականության կառուցվածքում անհրաժեշտ է առանձնացնել տոկոսային քաղաքականության ձևավորման և գործնական իրականացման ոլորտները: Այս նպատակով հարմար է կիրառել բանկային գործունեության ռազմավարական կառավարման գաղափարը՝ որպես մարտավարությունների միացյալ կառավարում (անմիջական, կողմնակի տնտեսական կառավարում, ներբանկային կառավարում՝ շարադրված Ն. Ե. Եգորովի և Ա. Մ. Սմուլովի աշխա-

---

[1] Ожегов С.И., Швецова Н.Ю., Толковый словарь русского языка, М., Азбуковник, 1998, с. 553.

[2] Бакстер Н. и др., Банковское дело: стратегическое руководство./ Под ред. Платонова В, М., Из-во АО «Консалтбанкир», 1998, с.12.

[3] Шпилевская Е. Л., Процентная политика коммерческого банка. Автореферат диссертации на соискание ученой степени кэ.н.: 08.00.10.-Москва, РЭА им. Плеханова, 1998, с. 15.

տանքներում):[1] Բանկային քաղաքականության կառավարումը դիտարկվում է որպես հաջորդական փուլերից (ռազմավարություն-մարտավարություն-գործառնական կառավարում) կազմված գործընթաց, այսինքն՝ «քաղաքականությունը» առավել լայն հասկացություն է, քան «ռազմավարությունը» և ոչ հակառակը («.... ռազմավարություն հասկացությունը կրում է առավել լայն և հիմնարար բնույթ, քան քաղաքականությունը»[2]) , ինչպես ներկայացված է վերը նշված աշխատանքում, տվյալ գաղափարի կիրառությունը հնարավորություն է ընձեռում առանձնացնելու բանկային քաղաքականության ձևավորման և իրականացման ոլորտները: Ներկայացված դասակարգման հիմքում բանկային քաղաքականության առանձին տարրերի հեռանկարայնության և գործնական նշանակության սկզբունքներն են՝ ռազմավարական նպատակների ձեռքբերման տեսանկյունից:

Որոշ հեղինակներ տոկոսային քաղաքականությունը մեկնաբանում են դրա իրականացման ոլորտով. «Առևտրային բանկի տոկոսային քաղաքականությունն արտահայտվում է ըստ դրա ակտիվ և պասիվ գործառնությունների տոկոսադրույքների դինամիկայում»: Նման մոտեցման դեպքում տոկոսային քաղաքականության բովանդակությունը փաստացի չի բացահայտվում, այլ միայն նկարագրվում է դրա իրականացման ոլորտը (թե ինչում է այդ քաղաքականությունն արտահայտվում):

Առաձնահատուկ է Ա. Յու. Սիմանովսկու աշխատանքում տրված սահմանումը[3]. «Ամենաընդհանուր ձևով, առևտրային բանկերի տոկոսային քաղաքականությունը կարելի է սահմանել որպես պասիվ և ակտիվ տոկոսադրույքների կարգավորման ոլորտի քաղաքականություն, որը միտված է իրացվելիության, շահութաբերության և գործառնությունների զարգացման ապահովմանը»: Տվյալ մեկնաբանության մեջ հաջողված չէ քաղաքականության սահմանումը քաղաքականության միջոցով, սակայն դրանում առանձնացված են տոկոսային քաղաքականության երկու հիմնական կառուցվածքային տարրեր՝ ակտիվ և պասիվ տոկոսադրույքերի կարգավորում և տոկոսային քաղաքականության հիմնական նպատակները (իրացվելիության, շահութաբերության և գործառնությունների զարգացման ապահովում):

Ուշադրության է արժանի տոկոսային քաղաքականության այն սահմանումը, որը տեղ է գտել Գ. Ս. Պանովի «Առևտրային բանկի վարկային քաղաքականություն» աշխատանքում. «Բանկի մակարդակում իրականացվող տոկոսային քաղաքականությունն ընդհանուր ձևով կարելի է սահմանել որպես տոկոսադրույքների կարգավորման ոլորտում ռազմավարություն և մարտավարություն, որոնք ուղղված են բանկային գործառույթների զարգացման, իրացվելության և շահութաբերության ապահովմանը»[4]: Սակայն, այս սահմանումը կարելի է բավական լայնորեն մեկնաբանել, հետևաբար՝ հարկ է այն որոշակիա-

---

[1] Егорова Н. Е., Смулов А. М., Предприятие и банки: Взаимодействие, экономический анализ, моделирование. - М., "Дело", 2002, с.43.

[2] Экономический анализ деятельности банка./Учебное пособие под ред. Мамоновой ИД.-М.:«ИНФРА-М», 1996, с. 57.

[3] Симановский Л.Ю., Процентные ставки коммерческих банков: уровень и факторы.//Деньги и кредит-1991-№9, с.32.

[4] Панова Г.С., Кредитная политика коммерческого банка. - М :ИКЦ "ДИС", 1997, с. 71.

ցնել: Ինչպես նշվել է վերևում, տոկոսային քաղաքականությունն իրականացվում է մարտավարական և գործառնական քաղաքականության մակարդակում, իսկ առևտրային բանկի տոկոսային քաղաքականությունը մարտավարական և գործառնական կառավարում է: Միաժամանակ, տոկոսային քաղաքականության կառավարման գործընթացը կախվածության մեջ է գտնվում ընդհանուր բանկային ռազմավարությունից: Տոկոսային քաղաքականությունը, որպես բանկային քաղաքականության առանձին տարր, ունի իր կիրառության ոլորտը, այն է՝ տոկոսադրույքների կարգավորումը և կողմնորոշված է ընդհանուր բանկային նպատակների ձեռքբերմանը, վերջիններիս ընտրության հիմնավորմանը՝ շահույթ, իրացվելիություն, հուսալիություն և զարգացում:

Կատարված եզրակացությունների հիման վրա ձևակերպենք առևտրային բանկի տոկոսային քաղաքականության սահմանումը. առևտրային բանկի տոկոսային քաղաքականությունն ակտիվային և պասիվային գործառնությունների տոկոսադրույքների կառավարման ոլորտում մարտավարական և գործառնական կառավարումն է՝ բանկի գործառույթների զարգացման, հուսալիության, շահութաբերության և իրացվելիության ապահովման նպատակներով:

Ինչպես հետևում է սահմանումից, առևտրային բանկի տոկոսային քաղաքականության օբյեկտ է հանդիսանում տոկոսադրույքների որոշակի համակարգ, ընդ որում, տոկոսային քաղաքականությունը ենթադրում է տոկոսային հարաբերությունների կառավարում՝ ըստ բոլոր ձևերի և տարատեսակների՝ ինչպես ռեսուրսների ընդգրկման, այնպես էլ դրանց բաշխման ոլորտներում: Ըստ ձևի՝ տոկոսային քաղաքականությունը հանդես է գալիս կիրառվող որոշումների ձևով, իսկ ըստ բովանդակության՝ նման որոշումները հենվում են բանկի զարգացման ընդունված ռազմավարության վրա և ընդգրկում են տոկոսային հարաբերությունների ոլորտի վրա ազդեցության մեթոդները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարող ենք սահմանել բանկի տոկոսային քաղաքականության հիմնական սկզբունքները.

1. Խթանել շահույթի ստացումը կամ ստեղծել պայմաններ՝ ապագայում դրա ստացման համար:
2. Կարգավորել տոկոսադրույքի արժեքը վարկային և ավանդային գործառնությունների համար, սահմանել այնպես, որ այն ապահովի բակային գործառնությունների շահութաբերությունը և ծախսերի էլաստիկությունը:
3. Հետևողական լինել վարկերի և ավանդների՝ նախատեսված ժամկետների նկատմամբ:
4. Պահպանել իրացվելիության հավասարակշռությունը:
5. Նվազագույնի հասցնել տոկոսադրույքի ռիսկը:

Առևտրային բանկը յուրաքանչյուր գործարքի համար տոկոսադրույք հաշվարկելիս հաշվի է առնում բազային տոկոսադրույքի մակարդակը և վարկային համաձայնության ռիսկի բավարարումը: Բանկը կարող է իրականացնել տոկոսադրույքի փոփոխություն ընտրված վարկի պայմաններում՝ համաձայն ԿԲ-ի և այլ իրավասու մարմինների կողմից

առաջադրված տոկոսադրույքի, որոնք նպատակ ունեն կայունացնելու և կարգավորելու դրամաշրջանառությունը:

Ցանկացած տոկոսադրույքի դեպքում (վարկ, ավանդ) տոկոսային քաղաքականության մեջ կա մեկ ընդհանրություն, որը պետության դրամավարկային քաղաքականությունն է և ԿԲ ազդեցությունը: Նրանք ազդեցություն ունեն առևտրային բանկերի տոկոսադրույքի մակարդակի վրա՝ օգտագործելով միջոցները՝ որպես կառավարման և կարգավորման գործիքներ: Առաջինը կարելի է ներառել տոկոսադրույքի վերին մակարդակի սահմանափակումը, ապա տոկոսադրույքների միջև տարբերությունը, վերաֆինանսավորման տոկոսադրույքի ստեղծումը, տոկոսադրույքի սառեցումը և այլն: Այս գործիքների վրա անուղղակի կերպով ազդում են ԿԲ-ի կողմից սահմանված պարտադիր պահուստների մակարդակը, առևտրային բանկերի կողմից առաջարկված վարկերի չափերը, գինը և պայմանները, իրացվելիության գործակիցները և այլն:

Բանկի հարկային համակարգը նույնպես կապված է տոկոսադրույքի ուղղակի ազդեցության գործոնների հետ: Փոփոխված հարկային դրույքաչափերն ուղղակի կերպով ազդում են տոկոսադրույքների մակարդակի վրա: Որքան դրանք բարձր են, այնքան բարձր են նաև վարկերի տոկոսադրույքները և հակառակը: ԿԲ պահուստային պահանջների բարձրացումը նույնպես հանգեցնում է վարկերի տոկոսադրույքների բարձրացմանը[1]:

Այսպիսով՝ բանկային համակարգի երկմակարդակությունը դրսևորվում է նաև տոկոսային քաղաքականության ձևավորման ընթացակարգում, երբ կենտրոնական բանկը իր կողմից կիրառվող գործիքների և մեխանիզմների միջոցով փորձում է կարգավորել ֆինանսական շուկայում տոկոսադրույքի մակարդակը: Այդ քաղաքականության արդյունքում բանկերը դառնում են տոկոսային քաղաքականության հիմնական կրողները և յուրօրինակ միջնորդ են հանդիսանում երկրի ֆինանսական և իրական հատվածների միջև:

АЙК БЕДЖАНЯН

СУЩНОСТЬ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ ФОРМИРОВАНИЯ ПРОЦЕНТНОЙ ПОЛИТИКИ

Ключевые слова: *процентная политика, коммерческий банк, кредитная политика, финансовая стратегия*

Для определения содержания процентной политики необходимо сначала рассмотреть общие особенности политики процентных ставок коммерческого банка и выделить характерные задачи и цели процентной политики.

В статье представлены вопросы, связанные с сущностью и содержанием термина “процентная политика” в экономической литературе, а также связанные с принципами и теоретико-методологической основой формирования процентной политики.

[1] Գ. Թառումյան, Բանկերի ֆինանսական վերլուծության հիմունքները, Եր., 2003 , էջ 18-22:

HAYK BEJANYAN

THE ESSENCE AND METHODOLOGICAL BASIS FOR FORMATION OF INTEREST RATE POLICY

Key words: *interest rate policy, commercial bank, credit policy, financial strategy*

In order to disclosure the content of interest rate policy it is necessary to first consider general features of interest rate policy of commercial bank and segregate tasks and objectives specific to interest rate policy.

The article presents issues related to the essence and content of interest rate policy term present in economic literature, as well as the principles and theoretical and methodological basis of interest rate policy.

ԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, ՀՊՏՀ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆ

Հիմնաբառեր. *ֆինանսական ռիսկ, ֆինանսական կայունություն, սպասումների հավանականություն, վերադարձելիության հնարավորություն, վարկային ռիսկից պաշտպանվածության գործակից, ռիսկի գնահատում*

Հոդվածում ներկայացված է ֆինանսական ռիսկը, բացահայտված է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բնույթը: Վարկային պորտֆելի որակը վերլուծելու և գնահատելու համար արտացոլված է ցուցանիշների համակարգ, որի համալիր վերլուծությունը թույլ է տալիս գնահատել բանկի կողմից իրականացվող վարկային ռիսկի կառավարման արդյունավետությունը:

Բանկը, որպես ֆինանսական շուկայի բաղկացուցիչ մաս, ներառում է բազմաթիվ ռիսկեր՝ վարկային, օրենսդրական, հաշվապահական, իրացվելիության, արտարժութային, տոկոսադրույքի, անվճարունակության և այլն:

Միջազգային փորձում ընդունված են ռիսկերի դասակարգման տարբեր եղանակներ՝ կախված նրանից, թե որ չափանիշն է դասակարգման հիմքում:

Բանկային ռիսկերն ըստ բնույթի լինում են ֆինանսական և ոչ ֆինանսական: Դրանցից յուրաքանչյուրն իր հերթին կարելի է բաժանել մի քանի տեսակների, որոնք, ըստ էության, ներկայացնում են առանձին ռիսկեր: Ռիսկերի տարատեսակները չեն բացառում միմյանց, այլ փոխադարձաբար լրացնում են, ընդ որում, ցանկացած գործառնու-